

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Արժվյան համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեման հաստատելու մասին
Արժվյան համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ

Արժվյան համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեման հաստատելու մասին Արժվյան համայնքի ավագանու որոշման նախագիծը մշակվել է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի և 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.3-րդ կետի պահանջի համաձայն:

Համայնքում անվտանգ երթևեկությունն ապահովելու նպատակով համայնքի ղեկավարն իր լիազորությունների շրջանակներում պետք է կազմի և լիազոր մարմնի հետ համաձայնեցնելուց հետո համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնի համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեման՝ ներհամայնքային, տեղական, և հանրապետական տարանցիկ հատվածների ճանապարհների մասով:

Արժվյան համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեման հաստատելու մասին Արժվյան համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում, ինչպես նաև Արժվյան համայնքի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ